

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ

ՏՈՆԻՆՈՅԻ

ԱՐԿԱԾՆԵՐԸ





## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### Որտեղ Տոնիկոն անտեսամեղի է դառնում

Տոնիկոն Դե Ռոզան իր ծննդյան օրը տոնեց ու մյուս օրը դնաց դպրոց: Ճանապարհին տխուր մտքեր էին գալիս նրա գլուխը. «Մի՞թե կարելի է մարդու ստիպել, որ նա խնդիրներ լուծի և անգիր անի Հուլիոս Կեսարի պատմությունն հենց այն օրը, երբ լրանում է նրա տասը տարին: Ճիշտ է, ինձ ոչ ոք չի ստիպել, բայց ես ի՞նչ պատասխան պիտի տամ ուսուցչին: Ծննդյան օրվա մասին նա իսկի լսել էլ չի ուզի: Կշնորհավորի, հետո էլ կպահանջի, որ ցույց տամ, թե ինչպես եմ խնդիրը լուծելը:

Ճիշտն ասած, մայրիկը փորձեց Տոնինոյին հիշեցնել, որ կյանքում ծննդյան օրվա, տորթի ու նվերների նման հաճելի քաներէջ բացի, ուրիշ գործեր էլ են լինում:

— Տոնինո, դու խնդիրներդ լուծե՞լ ես:

— Մայրիկ, մեզ խնդիր չեն տվել:

— Իսկ գասերդ սովորե՞լ ես:

— Դաս էլ չեն տվել:

Այս կրկնակի սուտը Տոնինոյն այնպիսի շտապողականությամբ պատասխանեց, որ նույնիսկ հարկ չեղաւ, որ այդ մասին մտածել: Սուտը ինքն իրեն դուրս թռավ նրա բերանից, ինչպես տիկնիկային թատրոնում Մաղադանոսն է ճիշտ իր ժամանակին բեմում հայտնվում (այն նույն ըսպելին, երբ եկավ հայրիկի հետ կլինո դնալու ժամանակը):

— Ոչ խնդիր, ոչ դաս, միայն հնգիւսիները մտաին կլինոնկար պիտի տեսնենք:

«Խնդիան» կլինոթատրոնում իսկապես հնգիւսիների մասին ֆիլմ էր ցուցադրվում: Էկրանին նայելով Տոնինոն խնդիրների մասին բոլորովին մոռացավ. մոռացավ նույնիսկ այն մասին, որ սուտ է ասել, և որ խղճով խոսենք, դա նրա համար այնքան էլ դժվար չեղավ:

«Ի՞նչ պիտի անեմ հիմա, — դպրոցի շէմքին ոտքը դնելով, մտածեց Տոնինոն: Նա այնքան մտահոգված էր դրանով, որ ելքը նստեց նստարանին — հինգերորդ «բ» դասարանի երկրորդ շարքի առաջին նստարանին, — նույնիսկ մոռացավ բարեկէլ իր ընկերներին, անգամ ոչ մի խոսք չփոխանակեց Սպիրտակ Նեդրի հետ, այսինքն Բորբերաո Կաստելիի հետ, իր աժենամտերիմ բարեկամի, որին այդ մահանունը սպել էին իր գանդուր մագեբի համար:

Բորբերաոն նստել էր հինգերորդ կարգի առաջին նստարանին, բայց երևի նա էլ մտածմունքի մեջ քնկնելու պատճառներ ուներ, որովհետև Տոնինոյին ընդառաջ չվազեց, որպեսզի պատմի նրան իր զվարճալի պատմություններից մեկը: Տոնինոն տեսավ միայն նրա գանգրահեր գլուխը, որ խոնարհվել էր պատմության դասադրութի վրա:

Դասարան մտավ ուսուցիչը: Այսօր նա սովորականից ավելի խիստ էր ելելում: Տոնինոն հուսահատ աչքերը ուղղեց փակ դռանը, փակ պատուհաններին, որ ծածկված էին, որպեսզի նույնաբերյան մատուխուղը դասարան չթափանցեր: Այ, եթե հարափոր լիներ թաքնվել

այդ մատախուղի մեջ, եթե հնարավոր լիներ գտնել մի օր անտեսանելի գառնալ:

Ուսուցիչը սկսեց ներկա-բացակա անել: Մհա և արտասանեց.

— Դե Ռոդա Տոնինո:

— Ներկա, — պատասխանեց Տոնինոն բարակ ձայնով:

— Դե Ռոդա, — կրկնեց ուսուցիչը: — Ինչո՞ւ Դե Ռոդան չի եկել:

— Ես այստեղ եմ, պարոն ուսուցիչ, — ավելի բարձր պատասխանեց Տոնինոն:

— Ձեզանից ոչ ոք չի՞ տեսել Դե Ռոդային:

— Ո՛չ, պարոն ուսուցիչ:

Դա սաաց Սպիրտակ Նեգրը, իսկ դասարանի կեսը սկսեց ուղիղ հայել Տոնինոյի նստարանին: Տոնինոյին թեև տխուր մտքեր էին համակել, քրքջաց:

— Դուք ինձ չե՞ք տեսնում, ինչ է՞ Ես անս նստած եմ այստեղ, նստարանին:

Բայց ո՞ւր: Երեխաները ցրված նայում էին նստարանին, կարծես ուզում էին ստուգել, թե բավականաչափ թանաք կա՞ թանաքամանում, և ոչ ոք չնկատեց Տոնինոյին:

— Ես այստեղ եմ, պարոն ուսուցիչ, այստեղ եմ, — ճշաց Տոնինոն և տեղից վեր ցատկեց:

Բայց նրան դարձյալ ոչ ոք չսեց: Ուսուցիչը հույսիսկ Սպիրտակ Նեգրին սաաց.

— Կասե՞լի, դասերից հետո մտի՛ր Դե Ռոդայենց տուն, աես հորան չի պատահել նրան:

Ներկա-բացական շարունակվում էր: Եվ հանկարծ Տոնինոն հասկացավ, որ իր ցանկությունը կատարվել է, որ ինքը անտեսանելի է դարձել: Բանից պարզվում է, որ դրա համար հարկավոր էր ինչպես հարկն է ցանկանալ: Իսկ նա այնքան շատ էր ուզում այդ, որ նույնիսկ նրա կոշիկների թեղերն անտեսանելի էին դարձել:

Հիմա արդեն ոչ ոք չէր կարող նրան տեսնել, ոչ էլ լսել: Իսկ եթե որևէ մեկը անգամ նկատել էր նրա դպրոց մտնելը, երևի արդեն մոռացել էր այդ մասին:

«Այ քեզ բան, — զարմացած մտածեց Տոնինոն և անմիջապես թեթևացած շունչ փաշեց: — Ավելի լավ, ուսուցիչը հո չի կարող անտեսանելի աշակերտին զբաղատխտակի մոտ կանչել: Մնաս բարով, թանկագին Հուլիոս Կեսար»:



Նա ցանկացավ անմիջապես ստուգել, թե իսկապե՞ս անտեսանելի է դարձել Տոնինոն վեր կացավ և մոտեցավ գրատախտակին։ Ոչ ոք չէր եղել նրա կողմը, կարծես թե նա իսկի գոյությունն չուներ։ Նրա տեղը որ մի ճանճ էլ լիներ, էլի ուշադրություն կդարձնեին վրան։

Նա ետ ու առաջ գնաց նստարանների միջով, սկզբում զգուշորեն, բայց հետո սկսեց իսկականից վազվզել։ Եվ ինչ։ Ո՛չ ոք գլուխը չբարձրացրեց, ո՛չ ոք շուռ չեկավ։ Տոնինոն երկրորդ անգամ քրքջաց, ուղիղ Ռոբերտոյի աչքի առաջ, բայց Սպիրտակ Նեգրը շարունակում էր քորել իր գանգրահեր գլուխը, ըստ երևույթին մասածելով Հուլիոս Կեսարի քաջագործություններին մասին։

**Որտեղ Տոնինոն սկսում է օգտվել այն քանից,  
որ անտեսանելի տղա է դարձել**

Առաջ Տոնինոն շատ էր մտածում այն մասին, թե անտեսանելի դառնալով ինչքան հետաքրքիր բաներ կարելի է անել: Բայց հետո, երբ այդ անսովոր բախտը նրան ժպտաց, նա Սպիրտակ Նեգրի մադերը քաշելուց բացի, ոչ մի լավ բան չկարողացավ հնարել: Նա բռնեց իր բարեկամի մազերից և ձիգ տվեց, իհարկե, ոչ այնքան ուժեղ, բայց և ոչ էլ այնքան թույլ:

Սպիրտակ Նեգրը անմիջապես շուռ եկավ և չարաթյամբ նայեց իր հետևում նստած աղային: Իսկ այդ աղան, որի անունը Մոտատ էր, ամենաբարեհոգի էակն էր աշխարհում, նրա գրպաններն ու բերանը միշտ լիքն էին կոնֆետով, անանուխի, անխոնի, լիկյորի, ածկաշաքարի և այլ էփանագին քաղցրեղենով:

— Ինչ է, ուզում ես որ քեզ բլիթ դարձնեմ:

— Բլիթ, — զարմացած կրկնեց Մոտատն, բայց հետո ժպտաց. — Դու անանուխի բլիթ ես ուզում:

Ժամանակ չկորցնելու համար, նա ուղղակի բերանից հանեց բլիթը, որ քիչ առաջ ծամում էր և թանաքստած մտաներով մեկնեց ընկերոջը:

— Բլիթը քեզ պահիր, իսկ ինձ հանդիստ թող, — կարուկ սաաց Սպիրտակ Նեգրը:

— Իսկ ես քեզ ի՞նչ եմ արել:

— Լսի՛ր, հերիք է ձևանաս:

Լսելով, որ իրեն ձևացող են անվանում, խաղաղասեր Մոտատն միանգամից կուլ տվեց բերանում եղած ամերիկյան ուետինե ծամոնը:

Տոնինոն հռչաց և, սրպեսզի հիանա կտաարվածով, նստեց կոնֆետ խժուղի նստարանին: Ձէ՞որ նրան, միեկունյն է, ո՛չ ոք չէր

տեսնում եւ ո՛չ ոք նրան չէր կարող գիտողություն անել առանց թույլտվության ուրիշի նստարանին նստելու համար:

Բայց ուսուցիչը թեւ չէր կարող Տոնինոյին տեսնել, այնուամենայնիվ նկատեց, որ արդեն մի քանի բոլոր է, ինչ առաջին եւ երկրորդ նստարանների միջև վեճ է գնում:

— Ի՞նչ է պատահել, — խիստ ձայնով հարցրեց նա:

— Ոչինչ, պարոն ուսուցիչ, — անմիջապես ստեց Սպիտակ Նեդրը: Նա գտնում էր, որ աղբը խրճիթից դուրս հանելու հարկ չկա:

Բայց Մոտտան բողոքեց:

— Ճիշտ չէ, նա ինձ ստախոս անվանեց:

Այստեղ Սպիտակ Նեդրն էլ դրոհի անցավ:

— Ինքն սկսեց, ինքն էլ մազերս քաշեց:

— Ճիշտ չէ, ճիշտ չէ, — աղաղակեց Մոտտան այնպիսի անկեղծությամբ, ինչպիսի անկեղծությամբ ընդունակ էր նրա բարի, լիկյորի, անանասի եւ հատապուղի խորխոսով քաղցրացած սիրտը:

Տոնին թեթևորեն թռավ հատակին եւ վազեց մինչև դասարանի մյուս ծայրը եւ քաշեց Պաոլո Բորբիի, իրենց դասարանի ամենաթափաթեղված տղայի մազերը, որին միանգամայն տեղին Մազափունջ անունն էին տվել:

— Պարոն ուսուցիչ, իմ մազերն էլ քաշեցին, — ճշաց նա, մատով ցույց տալով Ռիվելլին, որն այդ միջոցին մեծ ուշադրությամբ քիթն էր խորդում:

— Ե՛ս, — դարձացած ասաց խեղճը, որ բոլորովին անմեղ էր եւ նույնիսկ ժամանակավորապես ընդհատեց իր աշխատանքը, իհարկե, առանց մատը քիթից հանելու:

Մի քանի վայրկյանում Անտեսանելի Տոնինոն անցավ ամբողջ դասարանով՝ մերթ սրա, մերթ նրա մազերից ձիգ տալով: Բողոքի, մեղադրանքի ու ճիշերի փոթորիկ բարձրացավ:

— Վե՛րջ, վե՛րջ տվեք, — քանոնը ամբիոնին խփելով բղավեց ուսուցիչը, — կատակ արեցիք՝ պրծավ:

Ծիծաղից Տոնինոյի փորը պայթում էր: Նա այնքան ուժեղ էր ծիծաղում, որ վերջի վերջո գլորվեց գրաստախտակի տակ: Նա կյանքում դեռ այդքան ուրախ չէր եղել:

«Այ, եթե Սպիտակ Նեդրին պատմեմ, որ այս բոլորն իմ սարքած բաներն են, չի հավատա, — մտածեց Տոնինոն:

Գլուխը գրաստախտակի տակից մի փոքր հանելով, — նա նայեց Ռո-

բերառոյին, որն արդեն հանդիստ ու լուրջ լսում էր ուսուցչին: Իսկ ուսուցիչը նախադասութեան վերլուծութիւնն էր բացատրում: Բայց Ռոբերտոյի թիկունքում երևում էր Մոտտայի կոոր դեմքը, որի վրա ծայրահեղ զարմանք և զայրույթ էր դրոշմված. հուզմունքից նա չէր կարողանում կոնֆեստ գտնել և իր բաղմամբիվ գրպաններն ու գրպանիկներն էր քրքրում:

«Էդ ի՞նչ է, իրեն է քորում, ի՞նչ է. չլինի՞ թե լվերն են կծում» — մտածեց Տոնինոն: — Այո, դործս լավ հաջող անցավ, ինչքան ուրախ եմ ես»:


Բայց ինչքան էլ ինքն իրեն կրկնում էր, որ ուրախ է, բայց առանձնապէս հավատացած չէր դրանում: Ճիշտն ասած, հիմար կատակ ստացվեց: Մի մեծ հաճույք չէ սրահնրա մաղերից քաշելը: Մի՞թե արժեք անտեսանելի դառնալ, այդպիսի բան անելու համար: Ո՛չ, հարկավոր է իսկապէս մի որեւէ նոր բան մտածել, մի այնպիսի բան, որ մինչ այդ բոլորովին եղած չլինի:

Եվ Տոնինոն գրատախտակի հետևում պղպած մտածեց, մտածեց ու վերջապէս գտավ: Նա թեթեւ հրեց գրատախտակը, որն սկսեց իր համար կամաց պտտվել: Հետո պտտվեց ավելի արագ և մի ակնթարթ հետո սև գրատախտակը, այն գրատախտակը, որ ուսուցչի պաշտամունքն էր, որի վրա նա ցույց էր տալիս, թե ի՞նչպէս խնդիրներ լուծել, և թվաբանութեան խնդիրները լուծելիս շփոթվելով քրտնում էին աշակերտները, հանկարծ սկսեց գլխապտուտ արագութեամբ ֆուռալ, ավելի արագ, քան հողմադացի թևերը:

Երբ ուսուցիչը, մի դրահան և լուրջ մարդ, նկատեց, որ իր քառասուն աշակերտների լայն բաց արած աչքերը ուղղված են մի կետի, նրան թվաց, թե բոլորը նայում են պատուհանին: Եվ նա ակնոցը հանեց, դրեց իր դիմաց ամբիոնի վրա և սկսեց նայել նրան այնպէս, ինչպէս զինվորն է նայում հրացանին, որով նա պիտի կրակի:

Աշխարհում ոչինչ չէր կարող ստիպել ուսուցչին գլուխը դարձնել այն կողմը, որտեղ նայում էր ամբողջ դասարանը. նա այնքան լուրջ մարդ էր, որ թույլ չէր տա իրեն հափշտակվել ամեն մի թռչող օդանավով, կամ բազեով, կամ մառախուղի ինչ-որ խաղով:

— Ինչպէս երևում է, ամեն օրվա նման այն, ինչ կատարվում է դրսում ձեզ ավելի է հետաքրքրում, քան ուսուցչի պատմածը: Այս անգամ ի՞նչ եք տեսել այնտեղ: Ի՞նչ եք տեսել մառախուղի մեջ՝ թռչող ավիաներ, մարսեցիներ, լուսնոտներ:



— Գրատախտակը, պարոն ուսուցիչ, — սլատախտանեց Սպիրտակ նեպրը, որ վախեցած ոտքի էր կանգնել:

Հիմա արդեն գրատախտակը պտտվում էր ցիկլոնի արագությամբ: Տեսարանը, պետք է խոստովանել, տասն անգամ ավելի հետաքրքիր էր, քան գոյականի և ստորոգյալի տարբերությունը որոշելը: Ամեն օր չէ որ կարելի է մոտորով գրատախտակ տեսնել:

Ուսուցիչը որոշեց խախտել իր հաստատուն կանոնները և գլուխը շուռ ավեց դեպի արդեւիւած կողմը: Այն, ինչ նա տեսավ, սախկեց, որ նրա գլուխը պտտվի գրատախտակից էլ արագ: Նմանվելով հողմազացներին վրա հարձակվող Դոն-Կիխոտին, նա ամբիոնի մոտից ցատկեց և մեկ-երկու անօդուռ փորձերից հետո հաջողացրեց բռնել գրատախտակի անկյունից և մեծ ուժ դորձ գնելով կանգնեցնել այն:

Անտեսանելի Տոնինոն այնպիսի հարված ստացավ ծնոտին, որ թռավ ընկավ թղթի կողովի մեջ:

Բոլոր կողմերից հուզված ձայներ էին լսվում.

— Տեսի՛լք է, տեսի՛լք:

— Ինչ-որ ոգինե՛ր են:

— Ո՛չ, երկըշա՛րժ է:

— Լոճ' է, լոճ' է, պարոն աշակերտներ:

Դուք երեկ գլխի եք ընկնում, թե վերջին խոսքերն ով էր արտասանում: Այո', դա ուսուցիչն էր: Միայն ամենածանր բոլորներին էր նա տղաներին «պարոն աշակերտներ» կոչում և նման դեպքերում նրա ձայնն այնպես հանդիսավոր և զայրագին էր հնչում, որ բոլորը սարսափից սկզբում էին:

— Պարոն աշակերտներ, ես այդ կարգի հիմարություններ տանել չեմ կարողանում: Ուրվականները, մարտեցիները և այլ ուղիներ տեղ չունեն այս դպրոցում, ուր խելացի մարդիկ են մուտք դրո՞ծում:

Լոսեթյուն տիրեց: Եվ նույնիսկ Տոնինոն, որ կուշ եկած նստել էր ուռենու ճյուղերից հյուսած կողովի մեջ, զգաց, թե ինչպես է սիրտը գնդացրի նման արագ և չոր կտկտում: Իհարկե, ուսուցիչը նրան տեսնել չէր կարող, բայց անտեսանելի Տոնինոն ամաչում էր, այնպես, ինչպես կարող է ամաչել խելացի մարդու կողմից փախուստի դիմած ուրվականը:

— Դա զգվելի կասակ էր, — շարունակեց ուսուցիչը, — պարոն աշակերտները ոչ ուշ, քան մինչև այս դասի վերջը, կասեն ինձ, թե դա ու՞մ արարքն էր: Հակառակ դեպքում դասարանից ոչ ոք դուրս չի գա: Մենք կմնանք այստեղ այնքան, մինչև մեղավորը խոստովանի: Թեկուզ մինչև կես գիշեր: Իսկ հիմա վերադառնանք մեր պարապմունքին:

Մեղավորն այդ ժամանակ կամաց վեր կացավ, դուրս եկավ իր թաքստոցից և ոչ ոքի կողմից չնկատվելով, անցավ քառասուն զույգ աչքերի մոտով (քառասունմեկ զույգ, եթե հաշվենք նաև ուսուցչի աչքերը), հասավ դռանը, բաց արեց...

— Պարոն ուսուցիչ, դուռը լինքն-իրեն բացվեց...

## Որտեղ տիկին Զամբյուղը կուժում է տրամվայի կոնդուկտորի հետ

Տոնինոն չսպասեց, որ տեսնի, թե ինչով կվերջանա գործը և թե աչք տնդամ ինչ կասի պարոն ուսուցիչը։ Կայծակի արագությամբ նա սողոսկեց միջանցք, աստիճաններով ցած վազեց, հրելով դպրոցի սահակին, որը զարմացած ալուպես էլ չհասկացավ, թե ով էր, որ քիչ մնաց իջեն վայր գցի։ Եվ ահա, վերջապես, Տոնինոն փողոցումն է և տրամվայ է բարձրանում։

Տոմս, իհարկե, նա չգնեց, աշխարհում չկա այդպիսի մի սոմսավաճառ, որ կարողանա անտեսանելի ուղևորին ստիպել սոմս առնել։ «Ինչքան լավ բան է անտեսանելի լինելը» երևի կասեն իմ ընթերցողները։ Անվճար կարելի է երթեկեկել ոչ միայն տրամվայով, այլև գնացքով ու սավառակով... Կարելի է ճանապարհորդություն կատարել դեպի հարավային ծովերի կղզիները, կարելի է բռնել ծովահենի մորուքից առանց վտանգի ենթարկելու կյանքը... Նույնիսկ շնածինները քեղ չեն տեսնի... Կարելի է բարձրանալ շնածկան մեջքին և սլոկել նրա լողաթևերը...

Բայց պետք չէ առաջ վազել։ Անտեսանելի Տոնինոյի արկածները դեռևս չեն վերջացել։ Նախ քան նրան հախանձելը մի փոքր սպասենք։ Եւ այնքան էլ վստահ չեմ, թե նրա գործերը մինչև վերջ հաբթ կբնթանան։ Կապրենք՝ կտեսնենք։

Վազոնում երկու ազատ նստարան կար։ Տոնինոն նստեց նրանցից մեկին, իսկ մյուսն զբաղեցրին հաջորդ կանգառում։ Յբրորդ կանգառում շատ մարդիկ նստեցին, և մի հաստ կին, որ ձեռքին մեծ զամբյուղ ուներ, շտապեց դեպի այն տեղը, որ թվում էր, թե ազատ է, չնայած իրականում այդ տեղը զբաղեցնում էր Տոնինոն։

Առաջին հերթին կինն ուղեց զամբյուղը գնել նստարանին, բայց զամբյուղը կհս ճանապարհին կախվեց օդում։

— Ախ, — բացականչեց տիկին Զամբյուղը զարմանքից ապուշ կարած: — այսպիսի բան ինձ հետ դեռ չէր պատահել:

Տոնինոն դամբյուղը տեղավորեց իր ծնկներին: Գաղարը, կարտոֆիլը, խնձորն ու սառնձը, սալաթն ու մյուս կանաչիկները կարծես թե կախվեցին օդում:

— Այս ի՞նչ կատակներ են, — բղավեց տիկին Զամբյուղը, գլխով տոմսավաճառին:

— Ի՞նչ է, էլի ինչ-որ մեկը քորո՞ց է անկել նստարանին:

— Ձե՞, մի ինքներդ նայե՛ք, տե՛գն ազատ է, բայց ես չեմ կարողանում ախտիկ իմ դամբյուղը դնել:

— Այդ բոլորը տրամվայների գիրեկցիան է հնարել, որպեսզի ուղևորներին տանջի, — ակնաբեկեց ինչ-որ մեկի չոր ձայնը:



— Ի՞նչ է, տոմսավաճառ, պիտի օդնե՞ք ինձ այս տեղը զրավելու, թե ոչ:

— Դուք, սիրելիս, երևի կողահանջեք նաև, որ ես ձեզ համար կաբատֆիլ մաքրեմ: Մի՞թե ինքներդ չեք կարող նստել:



— Անպատկա՛ռ, ինչպե՞ս եք համարձակվում ինձ հետ այդպես խոսել: Դուք գիտե՞ք, թե ես ով եմ...

— Գիտեմ, գիտեմ, դուք այն ուղևորներից եք, որոնք ինձ ստիպում են ժամանակ կորցնել ոչ այնքան էլ սրամիտ կատակների վրա...

— Իսկ դուք գիտե՞ք, թե ով է իմ ամուսինը:

— Ո՛չ, տիկին, չգիտեմ, դուք ինձ ծանոթացրեք նրա հետ:

— Ա՛յ, քեզ սրիկա: Դուք գիտե՞ք, թե ով է իմ եղբայրը: Նա ձեզ անմիջապես աշխատանքից կհեռացնի:

Ազատելու մասին լսելով, տոմսավաճառը չարությամբ տոմսի ժապավենը խփեց աթոռին.

— Էդ դուք ո՞ւմն եք ուզում ազատել:

Այտեղ բավական իրարանցում սկսվեց: Ուղևորները բաժանվեցին երկու խմբի: Մի մասը ջղայնանում էր արամվայի գիրեկցիայի վրա, մեղադրում էր նրան այն բանում, որ թույլ են տալիս արամվայ մտնել ուրվականների, որոնք խանդարում են ուղևորներին երթևեկել, մյուս մասը հրճվում էր կատարվածով:

— Երևի էդտեղ մարսեցի է նստած: Ասում են թե բոլոր մարսեցիներն անտեսանելի են:

— Նրանց իրոք ոչ ոք չի տեսել:

— Երևի դա լուսնոտ է: Չէ՞ որ այդ կնոջը թվաց, թե երկնքից ինչ-որ բան ընկավ:

— Թողեք մի ես նստեմ էդտեղ, — ծիծաղելով ասաց մի հաստ մարդ: Ա՛յ, կտեսնեք, ես այդ մարսեցուն կճղմեմ, բլիթ կդարձնեմ:

Տոնինոն արագ գլխի ընկավ, որ նոր հակառակորդն ամենաքիչը հաբյուր կկոտորամ կշիռ կունենա:

«Դժբախտություն: Նա ինձ իրոք բլիթ կդարձնի, — որոշեց տղան և մինչ հաստ մարդը իր մտադրությունը կկատարեր, Տոնինոն վեր թռավ իր տեղից և արմունկներով հրելով ուղևորներին, արագ մոտեցավ ելքի դռանը:

— Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք... — ասաց հաստ մարդը և թափով նստեց աթոռին, որը քիչ մնաց ջարդ ու փշուր լինեք նրա ծանրությունից:

— Լա՛վ էր, ապրե՛ս, — ձայն տվեցին կատակասերներն իմբից: Մեկը նույնիսկ ծափահարեց:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, տիկին, — ծաղրանքով ասաց տոմսավաճառը:



Տիկին Չամբուղը կարմրեց իր պայուսաթի միջից դուրս ցցված պղպեղի նման և մյուս կանգառում վերավորված պրինցուհեւ նման ցած իջավ վագոնից։ Անտեսանելի Տոնինոն էլ դուրս եկավ։ Պետք է խոստովանել, որ այդ վառ արարքի համար նա այնքան էլ չէր տանջվում։

Գուցե հետադարձում նա կզղշա դրա համար, գուցե նա կսովորի սրամվայում տեղը գիշել կանանց, ես նրան բոլորովին էլ անպետք տղա չեմ համարում։ Բայց այդ բոլորին Տոնինոն ոչ թե խղճի խայթ, այլ ուրիշ բան էր զգում, որ ինքն էլ չգիտեր, թե ինչ է՝ ախորժանի թե քաղց։

«Ձէ՞, սա քաղց է, — սրտչեց նա, — լսա՛ս սրում իսկական և վատնգավոր քաղց»։

## Որտեղ հաշվապահ Պաշտոտիի պապի մասին լավ չեն արտահայտվում

Այդ ժամանակ ուղիղ նրա առաջ երեաց հրուշակի խանութի ցուցափեղկը, որտեղ շոկոլադի ու խմորեղենի դանձեր էին ցուցադրված: Տոնինոն որոշեց ներս մտնել խանութ: Խոսատվանք, որ դուք էլ երբեմն ցանկություն եք ունեցել անհատի մտնել հրուշակեղենի խանութ և դառնալ նրա բոլոր հրաշքերի տերն ու տիրակալը:

Հենց այդ վիճակի մեջ ընկավ Տոնինոն և նա դրանից աշխատեց շատ օգտվել, վերցնելով ամենաախորժալի և դրավիչ շաքարահացերը: Մի քանի բոլե էր անցել ընդամենը, երբ նա ծամելուց հոգնեց: Ախր նույնիսկ անտեսանելիները չեն կարող մի ամբողջ հրուշակեղենի խանութ մաքրագարդել: Հոգնած և ծուլորեն նա ձեռքը մեկնեց, որ մի ողորկած շաղանակ վերցնի, երբ հանկարծ հնչեց վաճառողուհու խիստ և չոր ձայնը.

— Զարժվե՛ք, կանգնեցե՛ք, ի՞նչ եք անում: Անմիջապես շաղանակը տեղը դրեք...

Տոնինոն այնքան արագ տեղը դրեց ողորկած շաղանակը, կարծես թե նրա ձեռքինը ոչ թե շաղանակ, այլ թուխավոր միջատ էր:

«Բռնվեցի, — մտածեց նա, — երևի ես արդեն անտեսանելի չեմ: Հիմի, իհարկե, ինձ կձերբակալեն ու բանտ կդնեն»:

Տոնինոն շփոթված շուռ եկավ դեպի վաճառող կինը և, ո՛վ դարմանք, նկատեց, որ նա մատով ուրիշ կողմ է ցույց տալիս, այնտեղ, որտեղ կանգնած էր բեզիկներով և լավ արտաքինով մի փոքրիկ պարոն:

— Այդ դուք ի՞նձ եք ասում, — հարցրեց բեզիկներով պարոնը (մենք շուտով նրա անունը կիմանանք):

— Հենց ձեզ: Ես տեսա, ամեն ինչ տեսա: Դեռ շուռ չէի եկել երբ դուք փորձեցիք ողորկած շաղանակ թուցնել: Ես ամեն ինչ տեսա հայելու մեջ: Հենց որ բղավեցի, դուք ձեր ավարը ցած դրեցիք:

— Ավա՞րը, — փնթփնթաց բեղիկներով պարոնը, զայրույթից խեղ-  
զվելով, — ավա՞րը: Դուք երեխի ինձ ծովահենի տեղ եք դրել, բայց-  
լմացեք, ձեր առաջ հաշվապահ Պալլոտաին է, լավ հիշեք այս:

— Կհիշեմ, միտքս  
կպահեմ: Այ, տեսնո՞ւմ  
եք, ես նույնիսկ դրում  
եմ ձեր աղգանուներ, որ-  
պեսզի ոտտիկանությանը  
հայտնեմ: Թեկուզ եռակի  
հաշվապահ լինեք, ո՛չ ոք  
ձեզ թույլ չի տա, որ շա-  
քարահաց գողանաք:

«Ինչ լավ է, — վախե-  
ցած մտածեց Տոնինոն:—  
Ուրեմն ես դեռ անտեսա-  
նելի եմ: Ի՛նչ երջանկու-  
թյուն, քիչ էր մնացել,  
որ բանա ընկնեի»:

— Այդ ե՞ս եմ շա-  
քարահաց գողանում, —  
բացականչեց անմեղ տե-  
ղը մեղադրվածը և սկսեց  
բռնեցքով խփել իր կրծ-  
քին: — Իմացեք դե, որ  
ես տասը տարի է այս խա-  
նութից եմ դնումներ կա-  
տարում, իսկ իմ պապը  
դեռևս ձեր ծնունդից առաջ  
գալիս էր այստեղ կարկանդակով սուրճ  
խմելու:

— Ձեր պապի մասին ոչինչ չեմ ուզում իմանալ, իսկ ձեզ ես  
ճանաչեցի:

— Ինչ է, դու դեռ իմ պապին է՞լ ես վիրավորում, — բղավեց  
իրեն բուրբուլիկ կորցրած Պալլոտաին:

— Ի՛նչ է պատահել, — հարցրեց հրուշակեղենի խանութի տերը,  
որ դուրս վազեց մյուս դռնիճից և անտարանը հաճույքով դիտող հա-  
ճախորդներին արմուկներով հրելով, մտանցավ վիճուղներին:



— Նա ուզում էր շաքարահաց թուցնել, — շտապեց բացատրել վաճառող կինը:

— Ոչ մի նման բան չի եղել: Ինքը վերավորեց իմ պապին, նուտար Զովաննի Բաախար Պալլոտաիին, որը այս և ուրիշ քաղաքներում ազնիվ մարդու, խիղախ հայրենասերի, օրինակելի հոր և ամուսնու համբավ ունի:

Կարճ առած՝ կռիվը բորբոքվում էր: Աճում էր մասնակիցները թիվը: Բոլորը խոսում էին միանգամից և արդեն ոչինչ հնարավոր չէր հասկանալ:

Հաշվապահ Պալլոտաին կատաղել էր: Ահա թե ինչու երբ ոստիկաններն եկան, առաջինը նրան տաբան: Երկու ոստիկան բռնեցին նրա թևերը, իսկ երրորդը լսեց հովանոցը, որով հաշվապահն սպառնում էր ծեծել խեղճ վաճառող կնոջը: Հետո նրան ուժով դուրս տարան խանութից:



Տոնինոն ուզում էր բացատրել, թե ինչպես այդ բոլորը պատահեց, նա խղճում էր անմեղ հաշվապահ Պալլոտաիին, բայց դրա համար անհրաժեշտ էր ապնվորեն խոստովանել, որ ինքն է շաքարահացերը դողացել: Ինչքան դժվար է լինում երբեմն ճշմարտությունը

խոստովանել: Ասիտ՝ ա: Տոնինոն ճշմարտությունը չառաց: Կարող եք հայհոյել նրան, կարող եք նրա հետ վարվել աշնպես, ինչպես սուտասանի հետ են վարվում, իսկ ես ոչինչ չեմ կարող անել, պետք է ամեն ինչ պատմել աշնպես, ինչպես իրականում եղել է: Ես դեռ չեմ ուզում ասել, թե շաքարահացերի պատմությունից հետո ի՞նչ եղավ կինոյում:

Անաստասնելի Տոնինոն, որպեսզի մոռանա սարսափն ու ամոթը, որոշեց խցկվել կինո: Պետք է ասել, որ ամբողջ քաղաքում միայն այդ կինոթատրոնն է, որ բաց է լինում առավոտները: Ես ձեզ չեմ ասի, թե որտեղ է այն դանդում, թե չէ ձեզ մոտ ցանկություն կառաջանա դպրոցի փոխարեն այնտեղ դնալ: Ախր հնդկացիների կյանքից վերցրած Փիլմը հանկարծ կարող է ձեզ ավելի հետաքրքիր թվալ, քան հին Հռոմի պատմությունը կամ տասնորդական կոտորակները: Տոնինոն մասով կինո և տեսնելով ի՞նչպես էկրանով չվարժեցրած ձիերի վրա կատաղի սլանում են կովբոյները, որոշեց իր բոլոր դժբախտությունների մասին մոռանալ:

Տոմս դնե՞ց արդյոք: Իհարկե ո՛չ: Ո՛չ մի հսկիչ չի կարող սիրալիք բռնել նրա օձիքից և մոտեցնել դրամաբեկին, ինչպես անողայման նա կվարվեր ձեզ հետ, եթե դուք փորձեիք առանց տոմսի խցկվել կինո:

Բայց այս օրվա ապրումները Տոնինոյի համար չափից դուրս մեծ էին: Դեռ չէր նստել նա աթոռին, երբ նրա աչքերը առանց նրանից թույլտվություն խնդրելու և նույնիսկ այդ մասին տեղյակ դարձնելու նրան, իրենք իրենց փակվեցին: Մի խոսքով, նա քնեց և ոչինչ էլ չտեսավ, իսկ արթնանալով նա հասցրեց տեսնել կովբոյի և ոսկի մազերով աղջկա հարսանիքը (ի միջի ալիս, ինչո՞ւ միշտ Փիլմի վերջում կովբոյները ամուսնանում են: Մի՞թե նրանք ավելի լավ բան չեն կարողանում գտնել):

Տոնինոն նայեց իր հարևանի ժամացույցին: Տասնեղևուն անց կես էր: «Տղաները հենց հիմա դուրս են գալիս դպրոցից, — մտածեց նա, — եթե շտապեմ, դույն հասցնեմ ճանապարհի կեսը նրանց հետ գնալ»:

## Որտեղ Սպիրտակ Նեգրը Տարզանի ազդադրական է տալիս

Հինգերորդ «բ» դասարանը դեռ դասից դուրս չէր եկել: Սովորաբար ամենավերջին ընդերքի ուսուցիչն սկսում էր նոր խնդիր թելադրել, կամ հանկարծ հիշում էր, որ աշխարհագրության դասագրքում հարկավոր է էլի մի քանի ասոդ ընդգծել: Նման դեպքերում աշակերտները ադմուկով ու չարությամբ բաց էին անում բեռնվելու համար պատրաստ օվկիանոսյան նավի ծանրոցների նման պայուսակները, որոնք վաղուց արդեն հավաքած ու կապված էին լինում և հանելով աշխարհագրության դասագիրքը, սկսում էին նրանով անհամբեր խփել նստարաններին:

— Մի քիչ համբերություն, — ասում էր նրանց ուսուցիչը, — դասագրքերը սովաններ չեն, դուք էլ լվացարարուհիներ չեք... Այսպես ուրեմն, հիսունվեցերորդ էջում հաշվեք յոթ ասոդ, սկսած «փոքրիկ ծովախորշերը...» բառերից ընդգծեք կարմիր մատիտով:

Ահա այն հազար պատճառներից մեկը, որոնց համար հինգերորդ «բ» դասարանը միշտ վերջինն էր գալրոցից հեռանում:

Բայց այդ օրը ուսուցիչն սպասում էր, որ աղաները զբաղախառակի հետ պատահածի համար խոստովանելին մեղքերը: Դասագրքերում բոլոր անհրաժեշտ տեղերը ընդգծված էին արդեն և պայուսակները դրված էին նստարաններին, բայց ուսուցիչը ձեռները խաչած կրծքին կանգնել էր պատուհանի մոտ և աչքերը հռել մառախուղին, կարծես թե սպասում էր, որ հենց այնտեղից է հայտնվելու մեղավորը:

Սպիրտակ Նեգրը ընդերքիցն էր անհամբեր հաշվում. նա որոշել էր դպրոցից դուրս գալով վերջնականապես բացատրվել Մոստայի հետ մաղերը քաշելու կապակցությամբ: Բայց բոլորովին այլ բան կար Մոստայի մաքում: Ի միջի այլոց, մենք առաջինք մաքում, բայց ճիշտ կլինեիր ասել ստամոքսում: Ախր դուք պետք է խմանաք, որ



Մոտոայի ստամոքսն առանձնապես անկշտում է և ոչ մի բույս անհրաժեշտ չի կարող:

Մոտենում էր մակարոն ուտելու ժամը և Մոտայի ստամոքսն այլևս չէր դիմանում: Նա վրդովված փնթփնթում էր.

— Շա սոված եմ, սոված եմ, սոված եմ... — նրա վրդովմունքը բույս առ բույս ավելի պերճախոս էր դառնում: — Գնալու ենք մենք վերջապես, թե՞ չէ. փնթփնթում էր ստամոքսը:

— Իսկ ե՞ս ինչ եմ արել, ե՞ս ինչով եմ մեղավոր:

— Ոչինչ չեմ ուզում լսել: Ձե՛սը ես գլուխ չեմ, այլ ստամոքս, այն էլ դատարկ:

Այսպիսի խոսակցությունը երկար տևել չի կարող: Հասավ այն բույսն, որ Մոտայի տեղի ավելց. սավանի նման գունատ նա վեր կացավ և ստամոքսի խորքից եկող ձայնով ասաց.

— Պարոն ուսուցիչ, այդ ես էի:

Ուսուցիչն անկեղծորեն զարմացած էր նրա խոստովանության համար և ուզում էր հարցնել, թե ի՞նչպես նրան հաջողվեց գրաստակատակի հետ պատահած օջինբաղությունը, չէ՞ որ նա տեսել էր, որ Մոտայի տեղից չի շարժվել:

Բայց հետո ուսուցիչը մտածեց, թե գուցե մի պահ իր ուշքը վրան չի եղել, և խոստովանած հանցադրժին պատիժ նշանակելով, վերջապես ցրվելու հրաման տվեց:

Ընկերները ջերմորեն ողջունում էին Մոտային հերոսության համար: Նույնիսկ Սպիտակ Նեղոսը ի նշան հաշտության, աչքով արեց նրան: Բայց հերոսը հայացքն հառել էր իր կոշիկի քթին. նա գիտեր, որ այդ գովեստներին ինքը արժանի չի, քանի որ պատճառը ոչ թե խիղճն էր, այլ ստամոքսը: Սուտը մնում է սուտ, եթե նույնիսկ նրա հետևանքները հաճելի են: Բայց սուտն արդեն ասված էր և չէր կարող իր խոսքերը ետ վերցնել: Մեղ մնում է միայն խղճալ նրան:

Բայց ի՞նչ էր անում այդ ժամանակ խելահան մեղավորը, որի խղճի վրա արդեն ծանրացել էր նաև Մոտայի սուտը:

Նա գալըցի դուռն մոտ կանգնած իր ընկերներին էր սպասում: Առաջ դուռն եկան աղջիկները՝ դասարանները և Տոնինոն օգտվելով առիթից՝ քաշում էր որևէ մեկի հյուսերից կամ արձակում կարմիր ժապավենը: Աղջիկները շատ էին զարմացել, սովորաբար տղաներն էին նման բաներ անում, իսկ հիմա մոտերքում ոչ ոք չկար: Բայց Տոնի-



նոյին այդ արարքները չէին գրավում, նա մի քիչ ցրված էր և բոլորովին ուրիշ բան էր մտածում:

«Ի՞նչ արած, օրը ես կորցրի, հիմի հարկավոր է իմանալ, թե ի՞նչ դատ են տվել, թե չէ վաղը նույնը կլինի, ինչ որ այսօր»:

Ինչպիսի՞ ահաճություն: Այս մտքերը ցցվել էին նրա ուղեգրում, ինչպես քարն է ընկնում կոշիկի մեջ, երբ կինո ես գնում և սեանսից ուշանալու պատճառով ժամանակ չունես կռանալու և քարը հանելու:

Իրար հետևից դպրոցից դուրս եկան բոլոր դասարանները: Անասուից դուրս եկող վայրի ցեղերի նման, ամեն մի դասարան դպրոցից դուրս գալիս արձակում էր իր ազդանշանը: Հինգերորդ «բ»-ն ընտրել էր Տարգանի ազդանշանը: Թորերսոն—Սպիտակ Նեգրը սովորաբար արձակում էր այդ ազդակը դեռ ոտքը սանդուղքի առաջին աստիճանին չգրած և նույնիսկ չսպասելով, որ մյուս ոտքը դպրոցի սանժաններից դուրս գա:

Պահակը նույնիսկ մի անգամ զայրացավ.

— Գոնե սպասիր, մինչև դպրոցից դուրս գաս:

Սպիտակ Նեգրը, որ երբեմն փաստաբանի նման էր դատում, պատասխանեց նրան, թե երբ իր գլուխը դնից արդեն դուրս է դալիս և դանդում է սանդուղքի առաջին աստիճանի վրա, ուրեմն կարելի է հաշվել, որ ինքն արդեն դպրոցում չի: Մի՞թե պահակը կասկածում է, որ գլուխը մարմնի ամենակարևոր մասն է...

Եվ ահա վերջապես ազմուկ բարձրացավ, ինչպես թռչնից դուրս եկող գնացքի գորգյունը: Դուրսնի ու քրքիջի ձայներ լսվեցին: Վայրենիներից ցեղը մոտենում էր: Դռան արանքից երևաց ինչ-որ մեկի գանգուր գլուխը. դա Սպիտակ Նեգրն է, որը ձեռքը բերանին սանեւով սարսափելի ազդանշան արձակեց:

— Բո՛ւլ-բո՛ւլ-բո՛ւլ-բո՛ւլ...

Տոնինոն ուղիղ դարբասի մոտ է, նա պատրաստ է նետվելու դեպի ընկերը, բռնելու նրա թևը, պատմելու իր արկածների մասին: Սպիտակ Նեգրը դրոհով գրավում է սանդուղքը, իսկ նրա հետևից ամբողջ հինգերորդ «բ»-ն, որն շտապում է կորցրած ժամանակը շահել... Բայց ցեղը անցավ, երևաց վերջին մարտիկի թիկունքը և ո՛չ ոք կանգ չառավ, ո՛չ ոք չհայեց խեղճ Տոնինոյին, ո՛չ ոք նրան թեւովանցուկ չարեց... Տոնինոն այնպիսի հուզմունքով էր սպասում ընկերների դուրս գալուն, որ նույնիսկ մոռացավ, որ անտեսանելի է դարձել:

Նա հասավ ստաճատակով շտապ քայլով Սպիտակ Նեղրի հետևից  
և բռնեց նրա թևից։

— Սպիտակ Նեղր, այդ ես եմ, Տոնինոն։

Սպիտակ Նեղրը, նույնիսկ առանց ետ գառնալու, թեք քաշեց և  
զալույթով մտածեց, որ թևի մեջ լու է մտել։ Բայց ո՞վ պիտի լուսն  
դուրսը բերեր։



— Սպիտակ Նեղր, դու ինձ չե՞ս լսում։ Դո՛ւնե լսիր ինձ, եթե  
տեսնել չես կարող։ Թե իմանաս, ինչե՛ր են պատահել ինձ հետ այն  
պահից, երբ ես անտեսանելի դարձա։ Դու ինձ լսո՞ւմ ես, Սպիտակ  
Նեղր։

Տոնինոն կաղալով, որովհետև նրա մի սաքը մայրի վրա էր,  
մյուսը ստաճատակին, վազում էր իր բարեկամի հետևից։ Նա ամբողջ  
ցերեկը լուկ էր և հիմա ուզում էր խոսել, չէ՞ որ նա շատ բան ուներ  
պատմելու։ — Բայց երևում էր, որ Սպիտակ Նեղրը իր հոգսերն ուներ։

— Ուզում ես ցույց տալ, որ ինձ չե՞ս լսում։ Դու ի՞նչ է, ինձ  
վրա չլսա՞նացել ես, որ մազերդ քաշե՞լ եմ։ Դե լսիր ինձ։

Ցանկանալով ստիպել, որ իրեն լսեն, Տոնինոն կատաղությամբ

բռունցքով խփեց իր բարեկամի մեջքին: Սպիտակ Նեզրը առաջ ընկավ և կաավի նման ձեռքերով հենվեց ասֆալտին:

«Զարմանալի է, — մտածեց նա, — երևի ոտքերս փաթ ընկան, թե չէ բոլորովին ուղիղ տեղ է»: Նվ նա վեր կացավ, բաճկոնի փոշին թափ տվեց և շարունակեց ճամփան, միայն թե հիմա նա քիչ դանդաղ էր շարժվում:

Տոնինոն նայեց ընկերոջը և աչքերն արցունքոտվեցին:

«Ինչի՞ է պեսք անտեսանելի լինելը, — ախուր ու հուզված մտածում էր նա, — երբ նույնիսկ ընկերներիդ հետ չես կարող խոսել: Ձէ, հերիք է: Ես ձանձրացել եմ, չեմ ուզում անտեսանելի լինել, ավելի լավ է լինել այնպես, ինչպես բոլորը: Ուզում եմ, որ Սպիտակ Նեզրը հարձակվի ինձ վրա և ինչպես նախանցյալ օրը՝ ոտք տա ինձ...»:

Բայց Սպիտակ Նեզրը հասավ իրենց տանը և դարձապես ներս մտավ առանց ետ դառնալու և առանց հրաժեշտ տալու Տոնինոյին: Ձէ՞ որ նա չգիտի, որ այստեղ, իր կողքին կանգնած է իր ընկերը, և ուզում է, որ հրաժեշտ տա իրեն, կամ հրաժեշտի փոխարեն ծամածոեն դեմքը, կամ լեզու դուրս հանեն: Տոնինոն այդպես էլ մնաց փողոցում կանգնած այնպես միայնակ, որ մարդու խիղճ էր տանջում: Մութացկանի նման նա նստեց սալահատակին: Հիմա նա ուզում էր ձեռքը մեկնել և խնդրել. «Այնպես արեք, որ ես լինեմ ձեզ նման, ինձ մենակ մի՛ թողեք»:

Բայց ո՞վ կարող էր տեսնել նրա մեկնած ձեռքը: Նույնիսկ ցուցափեղկերը Տոնինոյին չէին նկատում: Իդուր էր նա փորձում նրանց մեջ իր արտացոլումը տեսնել:

## Որտեղ Տոնինոն իմանում է, որ անտեսանելիներն էլ իրենց դադդն ունեն

Բայց հանկարծ նրան մի ավելի սարսափելի միաջ ցնցեց:

«Իսկ ա՜հ, Միթե մայրիկի հետ էլ է աշակես լինելու: Միթե նա չի կարողանա ինձ գրկել, գլուխս շոյել, ինչպես անում է միշտ: Միթե նա ինձ նույնիսկ շրխապնելով խփել չի կարողանա...»: Տոնինոն ամբողջ օրը ոչ մի անգամ չէր մտածել մայրիկի մասին, մոռացել էր նրան՝ ճաշակելով կարճատև երջանկությունը անտեսանելի ազալի, որի ձեռքից ամեն տեսակի օլինբաղություն գալիս էր: Բայց հիմա Տոնինոն վազում էր տուն, և նրա սիրտը թմբուկի նման խփում էր և անընդհատ «մայրիկ, մայրիկ» ճշում:

Իսկ մայրիկը կանգնած էր պատուհանի մոտ: Տոնինոն անմիջապես տեսավ նրա նիհարած, հուզված դեմքը ծաղկամանների հետևում: Մայրիկը սպասում է նրա վերադարձին՝ աչք չկարելով փողոցից և անա ուր որ է ձայն կոտ. «Պու նորից ուշացար... դասերից հետո մնացել ես խաղալով... Մակարոնը սառում է, իսկ հետո պիտի ասես թե սոսինձ է դարձել... Շո՛ւա, տուն անցիր»:

Մայրիկ, — ինչքան ուժ ունեւ ձայն ավեց վազելուց շնչահատ ելող Տոնինոն, — ես աշատեղ եմ, մայրիկ:

Բայց մայրիկը շարունակում էր ուրիշ կողմ նայել:

— Մայրիկ, նայիր ինձ: Սպասի՛ր, մայրիկ, ես հիմա գալիս եմ: Վազելով կբարձրանամ առաիճաններով: Թե իմանաս ինչ արկածներ եմ ունեցել:

Գնդակի նման նա նետվեց սենյակ: Հայրիկն արդեն նստած էր սեղանի շուրջը՝ լրագիրը հենած հանքային ջրի շշին: Գլուխը բարձրացնելով, նա վիթվիթաց.

— Երեւի գրսում քամի է: Լսեցի՞ք, թե ինչպես դուռը շրխապ:

Տոնինոն կանգնել էր նրա գիմաց՝ հոգնածությունից և վախից հաղիվ շնչելով, բայց հայրը նրան չնկատեց և նորից աչքերը հառեց լրագրին: Մայրիկը պատուհանից չէր հեռանում:

— էլի չկա տղան, տեսնես ի՞նչ է պատահել նրան:

— Ի՞նչ պիտի պատահի, — քրթմնջաց հայրը, — Փռւաբոլ է խողում, երեւի զնդակի փոխարեն թիթեղե օտւփ են ճարել: Միկնույն է, կոշիկի համար իրենք չեն վճարելու: Գու ավելի լավ է նստիլ և կեր: Իսկ նա ստիպված ինձ հետ պիտի գործ ունենա — Զեռքերդ մի՛ խցիկը ավտեի մեջ, ես քեզ հազար անգամ եմ ասել, որ վերմիշելը չի կարելի ձեռքով ուտել:

Վերջին խոսքը վերաբերում էր Ալբերտային, Տոնինոյի փոքր եղբորը:

— Իսկ եթե պատառաքաղի վրա չի մնում... Նա չեմ կարողանում:

— Պիտի սովորես ուտել, ինչպես պետքն է:

— Տոնինոն էլ է ձեռքով ուտում: Իսկ ինչո՞ւ եք վերմիշել եփում, մահարոնն ավելի լավ է, գոնե...

— Կեր առանց խոտելու... այդ էր մնացել, որ իմ աղաները ճաշը պատվիրեն, ինչպես ռեստորանում: Տես ուր ենք հասել: Սուս արա ու կեր:

Ալբերտոն լռեց: Այսօր օրը բացարձակապես անհամապատասխան էր հորը հակաճառելու համար: Տոնինոն ակամա ժպտաց: Ինչքան էլ նա հորը սիրում: Նույնիսկ այն օրերին, երբ հայրը մուսյլ և լիմոնի նման թթու էր լինում, նրանից միայն գիտագություն կարելի էր սպասել...

Տոնինոն մտանցավ հորը և ձեռքը դրեց նրա ուսին: Բայց հայրը շարունակում էր ուտել:

«Ինչպե՞ս զգալ ասո՞ւմ նրան, որ այստեղ եմ, — ինքն իրեն հարցնում էր Տոնինոն: — Ինչ-որ ազդանշան է պետք: Գուցե բաժակը շուռ տալ, կամ թղթի վրա մի բան դրել: Բայց այդ ժամանակ նրանք միայն կվախենան: Մայրիկն, իհարկե, վատ կզգա իրեն... Ավելի լավ է սեղանը կամ պատը թխթխկացնել, դուցե դանակով խփել բաժակին... Նրանք կտեսնեն, թե ինչպես է դանակն ինքն իրեն բարձրանում ու բաժակին հարվածում»:

Այս միտքը Տոնինոյին դուր եկավ: Նա զգուշությամբ վերցրեց դանակը և խփեց Ալբերտոյի բաժակին: Ի պատասխան լավեց բաժակի զնգզնգոցը, ասես զանգակ էր զողանջում:

— Ալբերտո, հանգիստ թող բաժակը, — ասաց մայրիկը:

— Նա բաժակին ձեռք չեմ ավել:

— Մի՛ ստի:

— Մայրիկ, ես բաժակին ձեռք չեմ ափել: Ահա, նայիր — նվ նա իրեն արդարացնելու համար ցույց ափեց իր ձեռքերը:

— Ալբերտ, ես հիմա կատակի արամազբուժեցուն չունեմ, — ասաց մայրիկը հոգնած ձայնով: Նա մերթ ընդ մերթ նայում էր ճոճանակավոր ժա-



մացույցին: — Արդեն մեկն անց տասնհինգ է: Տոնինոն երեք այսքան չէր ուշացել: «Մի բան արեք, մի որե՛ք բան արեք, — ուզում էր ճշալ Տոնինոն, — օգնեցեք ինձ»:

Նա ճաշատեսյակում ետ ու առաջ էր քայլում, միջանցք էր դուրս գալիս և վախենում էր իր մենակությունից:

Նա այլևս չէր ուզում զսպել արցունքները, որ ցած էին հոսում նրա այտերով: Նա շրթունքների վրա զգում էր նրանց ջերմությունը: Խեղճ անսեռանելի Տոնինո: Ընդամենը մի քանի ժամ առաջ նա ուրախացավ, երբ հասկացավ, որ ուսուցիչն իրեն չի տեսնում և չի կարող գրառախտակի մոտ կանչել, իսկ հիմա նույնիսկ ուրախ կլիներ, եթե օրագրում «երկու» բերեր տուն...:

«Ես այլևս այստեղ չեմ կարող գիմանալ, — մտածեց Տոնինոն, — ավելի լավ է դնամ բախ»:

Նրանց բախի տղաները շատ արագ վերջացրին իրենց ճաշը, կարծես թե ճաշն էլ մի ձանձրանալի դոս էր և հիմա իջել էին ցած՝ ոտքները մի քիչ վարժեցնելու: Իհարկե, այստեղ իսկականից խաղալ չէր կարելի. դա արգելված էր, և դռնապանը, ինչքան էլ որ բարի մարդ էր, ոչ մի կերպ կարգի խախտում թույլ չէր տա: Բայց և այնպես, կարելի էր մի փոքր վազվզել կամ բախի մի անկյունում հավաքվելով՝ շաղակրատել:

Բախում ծաղկեթումբ էր պատրաստված, որի կենտրոնում մի սոճի էր բարձրանում: Ծաղկեթմբի վրա քայլել, իհարկե, արգելված է, բայց Տոնինոն նստեց կանաչ գորգի վրա ու մեջքով հենվեց ծառին:

«Դռնապանն ինձ չի կարող տեսնել: Գոնե այս բանը թող ինձ մխիթարի», — մտածում էր նա: Հանկարծ լավեց երեխաների աղմուկը:

«Ինչքան եմ նախանձում նրանց, ինչքան երջանիկ են նրանք: Կարող են նայել իրար երեսի, կարող են իրար ձեռք բռնել և խոսել իրար հետ: Եթե ուզենան, կարող են նույնիսկ կռվել, որպեսզի հետո նորից հաշտվեն»:

Ինչքան կարևոր ու գեղեցիկ էին հիմա նրան թվում այդ դատարկ բաները:

Իսկ ընկերները: Նա երբեք չէր մտածել այն մասին, թե ինչքան լավ բան է ընկերներ ունենալը:

«Հիմա ես գիտեմ, թե աշխարհում ի՞նչն է ամենավատ բանը, — ինքն իրեն ասում էր Տոնինոն, — ո՛չ «երկուսը» և ո՛չ էլ աղքատությունը: Ձե՞ որ աղքատները կարող են իրար օգնել: Ամենավատ բանը մենակութունն է: Մենակ մարդը միշտ էլ անուժ է: Երջանկություն համար ուրիշ մարդիկ են պետք՝ մայր, բարեկամներ, ընկերներ, ուսուցիչ, մի խոսքով, աշխարհի բոլոր մարդիկ»:

Թող ձեզ չզարմացնի, որ Տոնինոյի գլխում այդպիսի բարդ մտքեր էին ծագում: Ձե՞ որ նա անտեսանելի է, իսկ դուք երբեք անտեսանելի չեք եղել: Այո, առարկել չի կարելի, նրա մտքերն ուրախ չէին: Իսկ ախուր մտքերը սև թռչունների նման են: Տոնինոյին նույնիսկ թվաց, որ սև մտքերը աղռավի երամի պես պատռյալ են գալիս իր գլխավերևում: Բայց Տոնինոն նրանց չէր տեսնում: Մտքերը միշտ էլ անտեսանելի են, թեև պատկանում են նրանք միս ու արյուն ունեցող մարդկանց:



## Որտեղ Պատրան տեսալ Տոնինոյին ել պատմեց նրան բարդ գործերի մասին

Մինչ Տոնինոն տարված էր իր մաքերով, նրա թիկունքում լավեց ինչ-որ մեկի ձայնը.

— Մի՞թե դու չգիտես, որ ծաղիկեթմբի վրա նստել չի կարելի։ Այ, դռնապանը կանոնի և քեզ ինչպես հարկն է՝ ցույց կտա։

Տոնինոն միանգամից շուռ չեկավ։

«Այդ ի՞նձ են ասում, — մտածեց նա ցրված։ — Ձե՞ որ ինձ հետ խոսել չի կարելի, քանի որ ինձ ոչ ոք տեսնել չի կարող»։

Բայց ձայնը շարունակում էր պնդել։

— Ի՞նչ է պատահել քեզ։ Դու քեզ վատ ես զգում։

Այս անգամ Տոնինոն շուռ եկավ։

Կարմիր շարժը վզին վաթաթած մի աղջիկ այնպես էր նայում, որ կարծես թե իսկական տեսնում էր իրեն։

— Այդ դու ի՞նձ ես ասում, — հարցրեց դեռևս չհուսադրված Տոնինոն։

— Էլ ո՞ւմ պիտի ասեմ, — ծիծաղեց աղջիկը՝ սև հյուսքերը թիկունքին գցելով։

— Ձե՞ որ այստեղ քեզնից բացի ուրիշ մարդ չկա։ Եվ դու էլ գիտես, որ ծաղիկեթմբին նստել արգելված է։

— Դռնապանն ինձ չի տեսնի։

— Հա՛, բա ես ո՞նց եմ տեսնում։ Ձնայած դու պահվել ես ծառի հեռում, բայց միևնույն է, երևում ես։

Տոնինոն ուսերը վեր քաշեց։ Աղջիկը պատվեց ծաղիկեթմբի շուրջը և կանգնեց ուղիղ նրա դիմաց։

— Ինչո՞ւ չես գնում։ Ուրեմն դու իսկապես քանջ ես։ Այ, ես էլ կնստեմ այստեղ։ Ի՞նչ պիտի մեզ անի դռնապանը։ Կգողա՞րուս և վերջ։ Իսկ ես կիտխեմ և վերջ։ Քո անունն ի՞նչ է։

— Տոնինո։



— Իսկ իմ անունը Պատրա է: Արդեն մի շարաթ է այստեղ եմ ապրում, բայց դեռ ոչ ոքի չգիտեմ: Ես հինգերորդ հարկումն եմ ապրում, իսկ դո՞ւ:

— Երկրորդ հարկում:

Տոնինոն անվստահ էր պատասխանում, կարծես թե վախենում էր, թե մինչև վերջ չի կարող իր ասելիքը ավարտել: Ախր այն պահից, ինչ նա անտեսանելի էր դարձել, առաջին անգամն էր որևէ մեկի հետ խոսք փոխանակելու հնարավորություն ունենում:

— Իսկ դու ինձ կարողանո՞ւմ ես տեսնել:

— Այդ էր մնացել, — ծիծաղեց Պատրան: — Ես հո կույր չեմ: Իհարկե, ես քեզ տեսնում եմ: Ես տեսա, որ դու մենակ ես և ոչ ոքի հետ չես խոսում: Դու է՞լ այստեղ ոչ ոքի չես ճանաչում: Այստեղ երևիսաներն ինչ-որ ահա՞ են: Անցնում են կողքից և այնպես են նայում ինձ, կարծես ես մըջյուն եմ: Ո՛չ ոք դեռ մի խոսք չի ասել: Իսկ աղջիկներ այստեղ բոլորովին չկան: Ինչ տարօրինակ բան է. գիտե՞ս, ես այստեղ միակ աղջիկն եմ: Մնացած բոլորը աղաներ են: Դուցե ձեզ մոտ կանգն աղջիկներ է:

Բայց Տոնինոն չէր պատասխանում: Նա մտածումներն մեջ էր:

«Եթե Պատրան ինձ տեսնում է, ուրեմն այլևս անտեսանելի չեմ: Ուրեմն ես նորից այնպես եմ, ինչպես բոլորը: Բայց գուցե ինձ միայն նա է տեսնում: Իսկ ինչո՞ւ: Մի՞թե կարող է այդպես լինել, որ ինձ միայն Պատրան տեսնի, մյուսները՝ ոչ: Հարկավոր է ստուգել»:

Նա մի թուխքով հասավ իր հին բարեկամներին, բայց աղաները թիկունքները նրա կողմն անելով, շարունակում էին խոսել իրար հետ: Տոնինոն հուզված վերադարձավ աղկա մոտ, որը նստել էր ծաղկեթմբի եզրին:

— Ուրեմն դու աղա անտեսանելի՞ն ես, — ասաց Պատրան:

— Ավա՜ղ, — պատասխանի փոխարեն հառաչեց Տոնինոն:

— Էլ ինչո՞ւ ես այդպես հառաչում: Չէ՞ որ դա շատ հեռաքրքիր պիտի լինի: Եթե ես անտեսանելի լինեի. կանեի այն բոլորը, ինչ մեծերն արգելում են և ոչ ոք ինձ ոչինչ չէր կարող ասել:

— Ես այլևս ոչինչ չեմ կարող անել: Ամբողջ օրը անտեսանելի եմ եղել և հիմա ուզում եմ դառնալ այնպես, ինչպես բոլորը: Ուզում եմ վերադառնալ առն, բայց ոչինչ չի ստացվում: Այսինքն, ես վերադարձա, բայց ոչ ոք ինձ չտեսավ:

— Եթե նրանք քեզ տեսնեն, կբարկանան ու շանաչու համար:

Բարկանալու պաաճառ կգտնեն, մեծերն այդպես են, հարյուր պաաճառ կգտնեն միանգամից...

— Ձի կարող պատահել... ասենք հիմա արդեն ինձ համար մի անուշ է: Ես միայն ուզում եմ ինչքան կարելի է շուտ գրկել մայրիկիս:

Պառլան լռեց, բայց շուտով նրա գլխում, ուղղակի հյուսքի տակ, նսր միաք ծագեց:

— Եթե դու անտեսանելի ես, բա ես ո՞նց եմ քեզ հետ խոսում:

— Ես էլ չգիտեմ: Իսկ դու ինչպե՞ս ես կարծում:

— Գուցե նրա համար, որ ես միշտ մենակ եմ: Ոչ ոք ինձ հետ ընկերություն չի անում, ոչ ոք հետս չի խաղում, ես ընկերներ չունեմ: Երեխաներն ինձ գրեթե չեն նկատում, ուրեմն ես ել եմ անտեսանելի:

Տոնինոն սկսեց մտածել այդ տարօրինակ բացատրության վրա: Այնուամենայնիվ, Պառլան տուն և մայրիկ ունեւ:

— Ո՞վ գիտի, — շարունակեց Պառլան և մտածելով ինքը քաշեց իր հյուսքից, — ո՞վ գիտի թե ինչքան անտեսանելիներ կան աշխարհի երեսին: Եվ ինչպե՞ս մարդ իմանա, եթե նրանք անտեսանելի են:

Տոնինոն իրեն կորցրեց: Այս կարգի խոսակցությունից կարող է մարդու գլուխ ցավել: Ինչ-որ մի հյուսքավոր աղջիկ ուզում է նման բարդ բաների մասին դասողություններ անել:

«Ահա և խելապես գլուխս ցավեց, — մտածեց Տոնինոն, — բայց գուցե և այդ նրանից է, որ ես ոչինչ չեմ կերել»:

## Որտեղ խոսք կ'իկնի Խեչագասը առեփորակյանի վապին

Նրա մտքերն ասես կարգալով, Պառլան հարցրեց.

— Իսկ դու ճաշե՞լ ես:

— Ո՛չ:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ... Այդպես դու խեղապես անտեստենելի կդառնաս: Չուտես՝ ոտներդ կչուես: Մի՞թե դու այդ մասին չգիտես:

— Դե լավ, որան՞դ կարող եմ ես ճաշել հիմա:

— Գնանք ինձ մոտ: Քեզ ոչ ոք չի տեսնի, իսկ ես կձևացնեմ, թե սովածացել եմ և խոհանոցից քեզ համար մի բուլկի կվերցնեմ: Դու կսպասես միջանցքում...—ես այնտեղ եմ միշտ տիկնիկ խաղում, իսկ հետո հանգիստ կուտես:

Մի խոսքով, ամեն բան գայթակղիչ էր երևում:

Նրանք աստիճաններով վեր բարձրացան: Նրանց ընդառաջ ելավ մի սինյորա և ասաց, «Բարե, Պառլա» — իսկ Տոնինոն ծիծաղն հազիվ էր զսպում, քանի որ սինյորան ուղիղ գալիս էր դեպի նա:

Պառլան, շատ զարմացնելով իր մայրիկին, մտավ խոհանոց և մի բուլկի վերցրեց:

Տոնինոն լսեց, թե ի՞նչպես նրա մայրիկը ծիծաղելով ասաց.

— Էդ ի՞նչպես է, որ դու այսօր այդպես սովածացել ես:

Մինչ Պառլան ցույց էր տալիս, թե տիկնիկ է խաղում, Տոնինոն ագահությամբ կերավ բուլկին շվեցարական մի կտոր պանրի հետ (ի՞նչ տարօրինակ բան է շվեցարական պանիրը: Ամբողջովին ծակտաված է, կարծես թե ինքն էլ է ուղում անտեստենելի դառնալ): Նրան թվաց, թե մինչև հիմա ինքը այդպիսի համեղ բուլկի չէր կերել. երկու վայրկյան չէր անցել, երբ բուլկին արդեն չքացավ: Վերջին պատառը կուլ տալիս միջանցք մտավ Պառլայի մայրիկը: Տոնինոն սեղմվեց պատին, բայց դա ավելորդ էր, որովհետև Պառլայի մայրիկը չէր կարող նրան տեսնել:



— Ի՞նչ ես անում այստեղ մենակ, — հարցրեց նա Պատլային: Մինչև աղջիկը կդառախաներ, Տանինոն ցնցվեց.

— Իսկ ես այստեղ մենակ չեմ, — պատասխանեց Պատլան, աչքով անելով աղային, որ մասը շրթանքներին էր մոտեցրել, ի նշան լռության:

— Դու մենակ չե՞ս:

Ոչ, ես իմ արկինիկներին հետ եմ: Մի՞թե դու չես տեսնում: Ա՛յ, սա էլիզաբեթն է, իսկ սա Մարիա Թերեզան, իսկ այս սեր խեղճ Բոնդու-Բոնդուն է:

Երբ Տանինոն ուտելը վերջացրեց, Պատլան նստեց վոքերիկ սեղանի մոտ և սկսեց դասերը տալուստուն:

— Դու պարտաւիրէ: Ի՞նչ դատ են տվել:

— Մի հիմար խնդիր, տհա՛ «Առևտրականը գնեց 2347 մետր մահու, մետրը 45 լիւր, լրաց վաճառեց մետրը՝ 177879 լիւրով: Ինչքան նա վատտակեց»:

— Բայց դա շատ հեշտ խնդիր է, ասաց Տոնինոն, այնպիսի հետաքրքրութեամբ, կարծես հարյուր տարի թվաբանութեամբ չէր ստացել: Խնդիրը նույնիսկ նրան հետաքրքիր թվաց, իսկ մաթեմատիկայի նկատմամբ իր ունեցած նախկին անտարբերութեանը այնքան հեռու թվաց իրենից, որ կարծես ոչ թե ինքը, այլ մեկ ուրիշն էր, որ առաջ խնդիրներ լուծել չէր սիրում:

— Խնդիրը հեշտ է, բայց հիմար, — ասաց Պաուլան: — Առն, դու երբեք տեսե՞լ ես մի սրեկ առևտրականի, որ միևնույն տեսակի երկու ու կես կիլոմետր կտոր միանգամից առնի: Ախր նա երբեք չի կարողանա այդ կտորը վաճառել: Մարդիկ հո չեն կարող շոր կտրել միևնույն գույնի կտորից: Եվ հետո այդ ի՞նչ գին է՝ մետրը 45 լիւր: Որտե՞ղ կարող ես այդքան էփան կտոր ձարել: Թե տեղը գլխուս, ասա, ես անմիջապէս վազելով կգնամ: Ո՞ր երկրումն է ապրում այդ սինյորը, որ այդպիսի խնդիրներ է հնարում: Ես մայրիկին օգնում եմ հաշիվներ պահելիս և գլխեմ, թե ինչը որքան արժի: Եվ ընդհանրապէս, ես քեզ տեսմ, ոչ մի տեղ այնքան հիմարութեաններ չես հանդիպի, ինչքան կան մեր լուծած խնդիրներում:

Տոնինոն հիացմունքով էր նայում աղջկան: Նրա համար թվաբանութեանը թվաբանութեան էր և ուրիշ ոչինչ, իսկ խնդիրներ լուծելը՝ ձանձրալի բան, որ ստիպւած անում էր վատ պնահատական չտանալու համար: Այդքան բան: Պաուլան ապացուցեց նրան, որ խնդիրն էլ պիտի հետաքրքիր լինի, ոչ պակաս հետաքրքիր, քան մայրիկի ու հայրիկի վեճերը ամսվա վերջին, երբ նրանք հաշվում են, թե ինչքան է ծախսվել և սրոշում, թե ի՞նչ պիտի գնեն հաջորդ ամսին:

Տոնինոն նստել և նայում էր Պաուլային, որ լուծում էր այդ խնդիրը և դա նրան հեշտ, հիմար և անօգուտ էր թվում:

Նա իսկականից ցանկութեան ունեցալ լուծելու մեծ և կարեւոր խնդիրներ, նրանցից, որ ծնողները լուծում են ամեն ամսի վերջին, կամ գուցե ամեն օր:

## Վերջաբան

Տոնինոյի պատմութեանը մոտենում է իր վախճանին: Դրա համար էլ այս գլխի սկզբում ես գրեցի «Վերջաբան», որը փաստորեն նշանակում է վերջ և ավարտ:

Տոնինոն իրոք արդեն մի քանի ժամ է դադարել է իտալական անտեսանելի լինելուց: Պատան տեսնում է նրան, խոսում նրա հետ, ուտելիք է տալիս նրան և խնդրում է օգնել խնդիրներ լուծելիս: Այս պայմաններում մենք պիտի օրենքով փոխենք պատմվածքի վերնագիրը, դենք, ասենք այսպես. «Բացի Պատլայից, բոլորի համար անտեսանելի Տոնինոն»: Բայց այսպիսի վերնագիրը շատ երկար կլինի:

Ի՞նչ կզգա մի տղա, որ սկզբում անտեսանելի է եղել և նորից դարձել է տեսանելի: Գուցե դա էլեկտրական տոկի հարվածի է նման: Գուցե նրա մեջքով սարսուռ կանցնի: Կամ գուցե նա մի թեթեւ կհուզվի: Ոչ ոք այս հարցերին պատասխանել չի կարող, քանի որ դեռ ոչ ոք այդ բանը չի գզացել: Միայն Տոնինոն կարող էր մեզ պատմել այդ մասին, և թե հիշեր: Բայց նա հիշում է միայն այն ուրախութեանը, որ պատեց նրան, երբ նայեց հայելու մեջ և տեսավ այնտեղ ուղիղ իրեն նայող տղայի արտացոլումը:

Սովորական մի տղա, ո՛չ դեղեցիկ և ո՛չ էլ տյանդակ, ո՛չ բարձրահասակ, ո՛չ էլ փոքրիկ, դե ուղղակի մի տղա նրանցից, որոնց ամենուր կարելի է հանդիպել: Տոնինոյին նույնիսկ թվաց, թե ինքը նրան շատ լավ է ճանաչում:

— Նայիր, — կանչեց նա Պատլային, բռնելով նրա ձեռքը:

— Առանց այդ էլ տեսնում եմ, իզուր ես ինձ հրում:

— Ախր սա ես եմ:

— Տեսնում եմ: Իսկ ո՞ւմն էիր ուզում տեսնել հայելու մեջ: Ձմեռ պապին, թե՞ ցախալիկ հեծած կախարդին:

— Դու ոչինչ չես հասկանում: Ախր սա նշանակում է, որ ես այլևս անտեսանելի չեմ: Նույնիսկ հայելին կարող է ինձ տեսնել:



— Ափսո՛ս, — ժպտաց Պառլանտ —  
Իսկ ես ինչքան էի ուզում ունենալ մի  
աղա-անտեսանելի: Ես նրան իմ ախի-  
նիկները հետ կընացնեի և թաքուն նա-  
խաճաշ կաայի:

Տոնինոն ավելի մոտեցավ հայելուն  
և ձեռքը մոտեցրեց դեմքին: Հայելու  
միջի աղան նույն բանն արեց:

№ 1 Տոնինոն հենց որ դեմքը ծա-  
մածուեց, № 2 Տոնինոն նույն բանը  
կրկնեց: Տոնինոն ծիծաղեց և անդն ու  
անզը երկուսն էլ ծիծաղեցին, և՛ այն  
Տոնինոն, որ կանգնած էր սենյակում, և՛  
այն, որ հայելու մեջ էր: Նրանք ժպտում  
էին իրար ինչպես երկու ընկերներ՝ եր-  
կար ճանապարհորդությունից հետո:

— Մայրի՛կ, — կանչեց Պառլանտ:

— Ի՞նչ պատահեց, թանկագինս.  
ախ, բարե, — առաց Պառլայի մայրիկը  
նկատելով Տոնինոյին, որ դեռ ծամածռու-  
վում էր հայելու մոտ:

— Ահա, ուրեմն մայրիկն էլ է քեզ  
տեսնում:

— Գուցե դու, Պառլա, կբացատրես  
ինձ, թե ինչ է կատարվում այստեղ:

— Այդ կարեւոր չէ, մայրիկ, եր-  
կար պատմություն է: Տոնինոն կար-  
ծում էր, թե իրեն այլևս ոչ ոք չի տեսնի:

Մայրիկն այլևս ոչ մի բանի մա-  
սին չհարցրեց, նա արագ շուռ եկավ և  
բավական գոհ ու զարմացած մնաց  
նկատելով, որ Պառլայի սեղանի վրա  
թվաբանության տեսքը բաց է և ամ-  
բողջ էջի վրա թվեր են դրված: Իսկ  
ախիները նույնպես իրենց տեղում:  
Եին կարգին վիճակի մեջ: Նրբեմն այդ-

քանն էլ հերիք է, որ մայրիկը դո՛ւ մնա: Ձե՛ռը մայրիկներն էլ գիտեն, որ երեխաներն իրենց փոքրիկ զաղանիքներն ունեն և հարկ չկա ամեն պնտլ խցիկիլ նրանց մեջ: Դա պարզապես համեստ բան չէ:

Իրենց բնակարանի դռների մոտ հայանվելով, Տոնինոն մի անգամ էլ շոշափեց իրեն, նա պարզապես ուզում էր իմանալ ամեն ինչ տեղումն է՝ քիթը, աչքերը, ականջներն ու ճակատի մազափունջը: Այո, ամեն ինչ տեղումն էր: Եվ նա դանդի կոճակը սեղմեց: Մայրիկը նրան պինդ գրկեց: Արդյո՞ք պետք է պատմել, թե ինչ եղավ հետո: Ոչ ոք նրա վրա չբարկացավ. բոլորն էլ այնքան էին հուզվել նրա կորստյան պատճառով, որ համբույրով կդիմավորեին նրան, եթե նույնիսկ նա վերադառնար յոթ տեղից պատռված վերարկուով և տասնյակ ուռույցք ունենար ճակատին: Այսպիսով, ամեն ինչ լավ վերջացավ: Տոնինոն վաղեց պատուհանի մոտ ու նայեց վեր:

Պառլան ձեռքը թափահարեց օդում, կարծես դրանով ուզում էր ասել «Տեսնո՞ւմ ես, իսկ դու վախենում էիր»:

Հետո Տոնինոն ամբողջ կես ժամ ուշքի չէր գալիս, շրջում էր տան մեջ, ձեռքերը կպցնում էր կահ-կարասիներին, շոշափում էր իր պալուսակը և գրկում էր մայրիկին: Ամեն ինչ նրան գեղեցիկ էր թվում, ամեն ինչ հիանալի: Ամեն ինչ տանը նրան նոր էր թվում, որ բերել էին այստեղ իրեն լավ դիմավորելու համար: Այդպես էին թվում նրան և՛ իր մահճակալը, և՛ վաննան, և՛ հեռախոսը:

— Այո՛, Սպիտակ Նեզր:

— Ո՞վ է խոսում:

— Այդ ես եմ, Տոնինոն:

— Ո՞ւր էիր կորել: Մեզ մոտ մի քեռ հետաքրքիր դեպքեր եղան: Հենց պետք էր, որ դու այսպիսի օր հիվանդանայիր:

— Ես էլ քեզ շատ բանի մասին պիտի պատմեմ, իսկ հիմա ասա, թե ի՞նչ դաս են ավել:

— Քանի որ հիվանդացել էիր, կարող ես դառերդ չպատրաստել, ո՛չ ոք քեզ չի հանդիմանի:

— Ուզո՞ւմ ես ձանձրանում եմ: Ավելի լավ է պարապեմ, և ժամանակը շուտ կանցնի:

— Դե, ի՞նչ արած, զբաղվիր: Շարադրություն են ավել...

Բայց ավելի լավ է մենք Տոնինոյին թողնենք իր շարադրության



հետ: Չէ՞ որ նրա տխուր արկածներն սկսվեցին հենց դառը չղատրաստելու պատճառով: Հիշո՞ւմ եք, թե ինչպես եղավ:

Հիմա Տոնինոն հասկացավ, որ կյանքում միայն ուրախ և հետաքրքրված լինելով բաներ չէ որ լինում են: Դժվարություններ էլ են պատահում, լինում են և հիմար խնդիրներ և ձանձրալի շարադրություններ: Իսկ ի՞նչ բան է դժվարություն: Չէ՞ որ դժվարությունը արդեւք է, որի վրայով պետք է թռչել: Թռա՞ր՝ անմիջապես կլինես սիրելի ընկերների շրջապատում, թռա՞ր՝ անմիջապես կհայտնվես նստարանի վրա և ուշագիւր կլսես ուսուցչի հանդիստ խոսքը: Թռա՞ր՝ կլինես տանը, հարապատներիդ հետ: «Ինչքան յալ է միշտ լինել ուրիշների հետ, — մտածեց Տոնինոն. — միշտ և ամենուր՝ տանը, գաղտնի, լսելով»:

Միշտ լինել բոլորի հետ և ամեն ինչ միտալն ունել: Աշխարհում մենակությունից վառ բան չկա: Նա փորձեց այդ անսահմանելի եղած ժամանակ և գլխի, թե դա ի՞նչ բան է:

## ԵՐԿՈՒ ԽՈՍԲ «ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՏՈՆԻՆՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ»

### ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Թանկացրին ընթերցողներ:

Ճշմարիտ է այս պատմությունը: Իմ կարծիքով, այո, թեև կարող է ճշմարտացի չլիպալ: Այստեղ պատմվում է մի տղայի մասին, որ անսահմանելի էր գարձել: Նա գլխեմ, այգւլիսի բան չի կարող պատահել: Նա էլ այդ գլխեմ:

Բայց շատ երեխաներ — կարող եմ գրադ գալ, որ ձեզնից էլ սմանք — դոնե կյանքում մեկ անգամ ուզեցել են անսահմանելի դառնալ: «Ի՞նչ արած: — մտածեցի ես, ենթացրենք թե այգւլիսի բան կարող է պատահել, իսկ ի՞նչ կլինի հետո»:

Այ, ես էլ պատմեցի, թե ի՞նչ դուրս կգար, եթե նման բան պատահեր: Իսկ կարող էր և՛ լավ բան դուրս գալ, և՛ բավական տհաճ բան: Այս պատմության վերջում իմ հերոսն ստիպված էր ասել. «Հերիք է, զահլա զհաց անսահմանելի լինելուց, ուզում եմ վերադառնալ բարեկամներին մոտ»:

Այն ազահին, երբ ընկերներին մոտ վերադառնալու ցանկությունը շատ ուժեղացավ, ի մեծ ուրախություն իմ հերոսի, այդ ցանկությունը պետք է իրականանար:

Նա տեսնում էմ, որ այս պատմությունն ստիպեց ձեզ մտածմունքի մեջ ընկնել: Ի՞նչ կա որ, մտածեք այդ մասին և կտեսնեք, որ պատմածս ծայրից-ծայր ճշմարիտ է:

